

«2017Թ. ՀՀ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՀԱՇՎԱՊԱՀ» ԱՆՎԱՆԱԿԱՐԳՈՒՄ ՀԱՅՏԱՐԱՐՎԱԾ

ՄՐՑՈՒՅԹԻ IV ՓՈՒԼԻ ՀԱՐՑԱՇԱՐԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

Հարց 1.

- Եթե ոչ առևտրային կազմակերպության նախորդ տարվա իրացումից հասույթը կազմել է 110,0 մլն դրամ, ընթացիկ տարվա հունվար մասին իրացումից հասույթը կազմել է 12,0 մլն. դրամ, ապա որքա՞ն կկազմի վճարման ենթակա ԱԱՀ գումարը, եթե կազմակերպությունը օրենսդրությամբ սահմանված կարգով ԱԱՀ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարություն չի տվել՝

ա) 2,0 մլն.

բ) 2,4 մլն.

գ) 0:

Հարց 2.

- Եթե «Ա» և «Բ» ԱԱՀ վճարող կազմակերպությունների միջև կնքված անշարժ գույքի վարձակալության պայմանագիրը օրենսդրությամբ սահմանված կարգով պետական գրանցում չի ստացել, ապա նշվածներից ո՞ր դեպքում ծախսը կարող է համարվել շահութահարկից նվազեցվող՝

ա) բոլոր դեպքերում.

բ) միայն այն դեպքում, երբ առկա է մատուցված ծառայության վերաբերյալ հանձնման-ընդունման ակտերը.

գ) ոչ մի դեպքում:

Հարց 3.

- Բյուջեի ստուգման ժամանակ ստուգող տեսուչը բացահայտում է, որ կազմակերպությունը օրենսդրությամբ սահմանված կարգով ՀԴՄ կտրոնի վրա ապրանքների անվանացանկ չի նշում: Ի՞նչ գումարի պատասխանատվություն կարող է նախատեսվել՝

ա) 150 հազ. դր..

բ) 175 հազ. դր..

գ) 300 հազ. դր..

դ) բոլոր տարբերակները սխալ են:

Հարց 4.

- Նշվածներից ո՞ր դեպքում է արձակման նպաստը հարկատուի հարկվող եկամուտներից նվազեցվում՝

ա) եթե այն սահմանված է աշխատանքային պայմանագրով՝ անկախ նպաստի մեծությունից.

բ) բոլոր դեպքերում՝ անկախ արձակման վճարի մեծությունից.

գ) հարկատուի հարկվող եկամուտներից այն նվազեցման ենթակա է ոչ ավել օրենսդրությամբ սահմանված նվազագույն մեծությունից՝ անկախ պայմանագրով սահմանված լինելու պայմանից:

Հարց 5.

- **Զնաչվող ՋՄ-ների գծով կատարված ծախսումների կապիտալացման արտացոլում`**
 - ա) Դեբետ 115 Հողամասեր
Կրեդիտ 826 Այլ ոչ ընթացիկ ակտիվների ստեղծման ծախսումներ.
 - բ) Դեբետ 154 Ոչ ընթացիկ ակտիվներ հետաձգված ծախսերի գծով
Կրեդիտ 826 Այլ ոչ ընթացիկ ակտիվների ստեղծման ծախսումներ:
 - գ) Դեբետ 714 Գործառնական այլ ծախսեր
Կրեդիտ 826 «այլ ոչ ընթացիկ ակտիվների ստեղծման ծախսումներ:

Հարց 6.

- **Գերազնահատումից կուտակված մաշվածության աճի ձևակերպում, որը ճանաչվում է այլ համապարփակ ֆինանսական արդյունքում (նախկինում վերազնահատված կամ արժեզրկված չի եղել)`**
 - ա) Դեբետ 671 Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների վերաչափումից օգուտներ
Կրեդիտ 112 Հիմնական միջոցների մաշվածություն.
 - բ) Դեբետ 624 Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների վերաչափումից օգուտներ
Կրեդիտ 112 Հիմնական միջոցների մաշվածություն:

Հարց 7.

- **Հետագա ժամանակաշրջաններ տեղափոխվող հարկային վնասի գծով հետաձգված հարկի գումարների արտացոլում.**
 - ա) Դեբետ 151 Հետաձգված հարկային ակտիվ
Կրեդիտ 751 Շահութահարկի գծով ծախս (փոխհատուցում).
 - բ) Դեբետ 261 Ընթացիկ ակտիվներ հետաձգված հարկերի գծով
Կրեդիտ 343 Հաշվետու տարվա զուտ շահույթ (վնաս).
 - գ) Դեբետ 225 Կարճաժամկետ դեբիտորական պարտքեր բյուջեի գծով
Կրեդիտ 751 Շահութահարկի գծով ծախս (փոխհատուցում):

Հարց 8.

- **Բաժնետոմսերի վաճառքից ստացված դրամական միջոցների մուտքագրում` բաժնետոմսերի անվանական արժեքը գերազանցող մասով`**
 - ա) Դեբետ 251 «Դրամարկղ»
Կրեդիտ 311 «Կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալ».
 - բ) Դեբետ 251 «Դրամարկղ»
Կրեդիտ 314 «Էմիսիոն եկամուտ».
 - գ) Դեբետ 251 «Դրամարկղ»
Կրեդիտ 351 «Պահուստային կապիտալ»:

Հարց 9.

- **Ֆինանսական վարձակալության գծով վարձավճարները վարձակալի մոտ`**
 - ա) ամբողջությամբ ճանաչվում են որպես ծախս.

բ) բաշխվում են ֆինանսական վճարի (տոկոսային ծախսի) և ֆինանսական վարձակալության գծով պարտավորության հաշվեկշռային արժեքի նվազեցման միջև.

գ) ամբողջությամբ ճանաչվում են որպես ֆինանսական վարձակալության գծով պարտավորության հաշվեկշռային արժեքի նվազեցում

դ) ամբողջությամբ ճանաչվում են որպես վարձակալված ակտիվի հաշվեկշռային արժեքի նվազեցում:

Չարդ 10.

- **Արտերկրյա միավորի ֆինանսական հաշվետվությունները՝**

ա) ընդհանրապես չպետք է վերահաշվարկվեն.

բ) ընդհանրապես չպետք է վերահաշվարկվեն, բացառությամբ այն դեպքերի, երբ արտարժույթի փոխարժեքային տարբերությունները էական են.

գ) ընդհանրապես չպետք է վերահաշվարկվեն, բացառությամբ այն դեպքերի, երբ արտերկրյա միավորը դասակարգվում է որպես արտերկրյա գործակալ.

դ) բոլոր տարբերակները սխալ են:

Չարդ 11.

- **Որպես շնորհի ստացված ոչ դրամային ակտիվները սովորաբար չափվում են՝**

ա) օգտագործման արժեքով.

բ) վաճառքի զուտ գնով.

գ) իրական արժեքով.

դ) օգտագործման արժեքից և վաճառքի զուտ գնից նվազագույնով:

Չարդ 12.

- **Ընթացիկ պարտավորությունները սահմանվում են որպես պարտավորություններ, որոնք՝**

ա) ակնկալվում է մարել կազմակերպության սովորական գործառնական փուլի ընթացքում.

բ) ենթակա են մարման հաշվեկշռի ամսաթվից հետո տասներկու ամսվա ընթացքում.

գ) միաժամանակ բավարարում են «ա» և «բ» կետերում նշված պայմաններին.

դ) բավարարում են «ա» կամ «բ» կետերում նշված պայմաններից մեկնումեկին:

«2017Թ. ՀՀ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՀԱՇՎԱՊԱՀ» ԱՆՎԱՆԱԿԱՐԳՈՒՄ ՀԱՅՏԱՐԱՐՎԱԾ ՄՐՑՈՒՅԹԻ IV ՓՈՒԼԻ ԽՆԴՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԸ

«ՍՄ» ՍՊԸ-ն հիմնադրվել է 2015թ.-ին և զբաղվում է ապրանքների արտադրությամբ և մանրամեծածախ վաճառքով: 2015թ. փետրվարին լիզինգով ձեռք է բերել սարքավորում՝ 5 տարի մարման ժամկետով, որի վճարումը կատարում է հավասարաչափ տոկոսի մարմամբ՝ յուրաքանչյուր ամիս 8000 հազ. դրամ, որից 6000 հազ. դրամը՝ մայր գումար, 2000 հազ.՝ տոկոս:

ԱԱՀ-ի հաշվարկման համար հաշվետու ժամանակաշրջան է համարվում 2017թ. մարտ ամիսը:

1. 2017թ. փետրվար ամսին իրացրել է 10000 պարկ բրինձ, 1 պարկի արժեքը՝ 400 դրամ, որը տվյալ կազմակերպության համար հանդիսանում է իր կողմից իրացվող արտադրանքի սովորաբար կիրառվող վաճառքի գին:

2. 2017թ. մարտ ամսին մանրածախ եղանակով իրացրել է 600 հազ. դրամի արտադրանք, որը ձեռք է բերել նույն հաշվետու ժամանակաշրջանում 690 հազ. դրամով /ներառյալ՝ ԱԱՀ/ :

3. 2016թ. այլ ԱԱՀ վճարող հանդիսացող կազմակերպությունից ձեռք է բերել 4600 հազ. դրամով /ներառյալ՝ ԱԱՀ/ արտադրական նշանակության տարածք, սակայն տվյալ գործարքը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով պետական գրանցում չի ստացել: Նույն կազմակերպությունը 2017թ. մարտ ամսին կատարել է 1450 հազ. դրամի /ներառյալ՝ ԱԱՀ/ կապիտալ նորոգման աշխատանքներ, որոնց դիմաց ստացող կողմը կատարել է վճարում՝ արժեքի 50 տոկոսի չափով:

4. Կազմակերպությունը 2017թ. փետրվար ամսվա իրացումների մասով մարտ ամսին ունեցել է ապրանքի հետ վերադարձ՝ 860 պարկի չափով:

5. Համաձայն իր կողմից կիրառվող մարքեթինգային քաղաքականության՝ գնորդ կազմակերպություններից մեկին, որը 2016թ. արդյունքներով ունեցել է առավելագույն վաճառք, 2017թ. մարտ ամսին այդ կազմակերպությանը վաճառել է 250 պարկ բրինձ՝ 1 պարկի արժեքը՝ 250 դրամ:

Որոշել հաշվետու ժամանակաշրջանի վճարման /հաշվանցման/ ենթակա ԱԱՀ գումարի չափը և լրացնել ԱԱՀ-ի հաշվարկը:

[Պատասխանը՝](#)

ԱԱՀ-ի հաշվարկ (համապատասխան վանդակում նշել «X»)	Փաստաթղթի հերթական համարը (Լրացվում է հարկային մարմնի կողմից)			
1. Հարկ վճարողի հաշվառման համարը	1 A. ԱԱՀ վճարողի հաշվառման համարը			
2. Հաշվետու (ճշգրտման) ժամանակաշրջան	Տարի 2017	Ամիս	03	Եռամսյակ
3. Ֆիզիկական անձի (անհատ ձեռնարկատեր) անուն, ազգանուն	4. Իրավաբանական անձի անվանումը «ՄՄ» ՍՊԸ			
5. Գտնվելու վայրը S	6. Աշխատանքային հեռախոսի համարը +(374) 123456			
Գ/Հ-ք	Տան հեռախոսային համարը			
7. Եթե հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում ոչ մի գործարք կամ ձեռքբերում չի կատարվել, վանդակում նշել "X", ստորագրել ստորև և ներկայացնել հաշվարկը				

(հազար դրամ)

ԱԱՀ-ի կրեդիտ	Ա. Շրջանառություն	Բ. ԱԱՀ կրեդիտ
8. ԱԱՀ-ից ազատված (հարկման օբյեկտ չհամարվող) գործարքների		
9. ԱԱՀ-ի 0-ական դրույքաչափով հարկվող գործարքներ		
10.1. Հաստատագրված վճարով հարկվող գործունեությունից		
10.2. Պարզեցված հարկով հարկվող գործունեությունից		
11. ԱԱՀ-ի 20% դրույքաչափով հարկվող գործարքների	52,083	10,417
12. ԱԱՀ-ի 16.67% հաշվարկային դրույքաչափով հաշվարկվող	600,000.0	100,020.0
Ճշգրտող հարկային հաշիվներով գործարքներ	286,667.0	57,333.0
13. ԱԱՀ-ի գծով այլ հարկային պարտավորություն		2,916.0
13.1. Կրեդիտի ընդհանուր գումարից հետաձգվող		
14. Ընդամենը ԱԱՀ-ի կրեդիտ Ա = ([8Ա] + [9Ա] + [10.1Ա] + [10.2Ա] + [11Ա] + [12Ա] - [12Բ])	Բ 265,396	56,020

ԱԱՀ-ի դեբետ	Ա. Արժեք	Բ. ԱԱՀ դեբետ
15. ՀՀ տարածք ներմուծված ապրանքների		
16. ՀՀ տարածքում ձեռք բերված ապրանքների և ծառայությունների	1,783,333	356,667
		2,712,292.0
16.1. Դեբետի ընդհանուր գումարից հետաձգված		
16.2. Հաշվանցման (պակասեցման) ենթակա ԱԱՀ-ի գումարի ճշգրտման ընդհանուր գումարը, այդ թվում՝ (նշել ճշգրտման հիմքը, պատճառը)	Ա. Ավելացում 1,000,000	Բ. Պակասեցում 15,000
Համաձայն ՀՀ Օրենքի հոդված 27-ի		
Համաձայն ՀՀ Օրենքի հոդված 23-ի	1,000,000	
Համաձայն ՀՀ Օրենքի հոդված 26-ի		15,000
Համաձայն ՀՀ Օրենքի հոդված 43-ի		
Ձեռք բերումներին վերաբերվող հարկային հաշիվներով գործարքներ		
17. Ընդամենը ԱԱՀ-ի դեբետ ([15Բ] + [16Բ] - [16.1Բ] + [16.2Ա] - [16.2Բ]) (Եթե արդյունքը դրական է լրացնել «Ա» վանդակը, եթե արդյունքը բացասական է, լրացնել «Բ» վանդակը)	Ա. դրական 1,341,667	Բ. բացասական -

18. Դեբետի ընդհանուր գումարից ԱԱՀ-ի գրոյական դրույքաչափով հարկվող գործարքներին վերաբերվող		
---	--	--

19. Տվյալ ժամանակաշրջանի համար հաշվարկված ԱԱՀ - եթե լրացված է [17Ա] վանդակը՝ ապա ([14Բ] - [17Ա]), - եթե լրացված է [17Բ] վանդակը՝ ապա ([14Բ] + [17Բ]): Եթե 19 տողի արդյունքը դրական է՝ լրացվում է «Ա» վանդակը, եթե 19 տողի արդյունքը բացասական է՝	Ա. Ենթակա է բյուջե վճարման (կրեդիտ)	Բ. Ենթակա է հաշվանցման (դեբետ)
	-	1,285,647